Աւելի եռանդով գրել սկսել է պատանի բանաստեղծը 1880 թուականից: Նա սովորութիւն չէ ունեցել իր ոտանաւորները ընկերներին ցոյց տալու: Իսկ երբ ճեմարանի վերին դասարանների աշակերտները լոյս ընծայել սկսել են իրենց «Ցոյս» անունով թերթիկը, Յովհաննիսեանն էլ հանդէս է եկել նրա էջերում: Աւելի է գրել սկսել համալսարանում, ուսանողական տարիներին: Դեռ աւարտած չէ եղել համալսարանը, որ իր մի քանի ուսանողընկերները հայթայթել են դրամական անհրաժեշտ միջոցները եւ առանձին գրքոյկով Մոսկուայում լոյս ընծայել երիտասարդ բանաստեղծի սկզբնական ոտանաւորները: Դա տեղի է ունեցել 1887 թուականին:

Իր ոտանաւորների այդ առաջին, փոքրածաւալ ժողովածուով իսկ՝ Յովհաննիսեան արժանացել է ընդհանուր գնահատութեան: Նա արդէն ծանօթ բանաստեղծ էր, երբ համալսարանն աւարտելուց յետոյ ոտք դրաւ մանկավարժական–գրական ասպարէզը:

Այնուհետեւ անցնում են ամբողջ 21 տարիներ, մինչեւ որ 1908 թուականին Բաղուի Հ. Կուլտուրականի միջոցներով Վաղարշապատում լոյս է տեսնում Յովհաննիսեանի բանաստեղծութեանց երկրորդ տպագրութիւնը: Եւ սակայն, գրաքննչական եւ այլ պատճառներով՝ այս վերջին հատորի մէջ եւս, որ բաղդատաբար լրիւ հրատարակութիւն է, մտել են Յովհաննիսեանի մինչ այն գրած ո՛չ բոլոր ոտանաւորները: 1887–ի տպագրութիւնից եւս դուրս էին մնացել մի շարք ոտանաւորներ, որոնք յետոյ տպագրուել էին Մ. Փորթուկալեանի «Արմենիա» թերթում (Մարսէյլ):

1912 թուականին լոյս տեսաւ Յովհաննիսեանի բանաստեղծութիւնների մի նոր տպագրութիւնը: Եւ սակայն, այդ «յորելենական հրատարակութիւնը», որ նուիրուած էր բանաստեղծի գրական գործունէութեան 30ամեակին (1882–1912) ոչ այլ ինչ է, եթէ ոչ 56 երեսներից բաղկացած մի գրքոյկ միայն, մի «փունջ հին եւ նոր ոտանաւորներից», ինչպէս որ անուանում են հրատարակիչները: Այնուհետեւ, այլեւս ոչ մի նոր հրատարակութեամբ լոյս չտեսան Յովհաննիսեանի բանաստեղծութիւնները: Այնպէս որ այժմ, հեղինակի մահից յետոյ էլ, պակսում է նրա ստեղծագործութեանց լիակատար, անթերի հրատարակութիւնը: Եւ պէտք է ասել, որ դրանք մեծաթիւ չեն. բոլորը ամփոփել կարելի է միջակ մեծութեան մի հատորի մէջ: Ցուսա՞լ արդեօք, որ Հայաստանի պետական մենարտօնեալ հրատարակչութիւնը, որ լոյս է ընծայում յայտնի եւ անյայտ «պրոլէտ–գրողների» գործերը, երբեմն էլ նրանց «Երկերի ժողովածուն», մի օր կը կատարի իր պարտականութիւնը հայ գրականութեան եւ հանդուցեալ բանաստեղծի հանդէպ, հասարակութեան ձեռքը տալով նրա գործերի լրիւ, անթերի հրատարակութիւնը: Թումանեանի վերաբերմամբ խոստացուածը գոնէ չկատարուեցաւ:

Յովհաննէս Յովհաննիսեան աշխատակցել է ժամանակի հայ պարբերական մամուլի մի քանի օրգաններին: Բացի «Արմենիա»յից, որի մասին յիշատակութիւն արինք, նա իր ոտանաւորներով աշխատակցել է նաեւ Մ. Բարխուդարեանի «Պատմական եւ Գրական Հանդէս»ին, Տ. Նազարեանի «Ազբիւր» եւ «Տարազ»ին, Էջմիածնի «Արարատ»–ին, Արզար Յովհաննիսեանի «Արձագանգ»ին, Ազանեանցի «Լումայ» ամսագրին:

Այս անունների թումն իսկ ցոյց է տալիս, որ Յովհաննիսեան իր հասարակական զգացումներով եւ քաղաքացիի հասկացողութիւններով կապուած է եղել հայ հանրային մտքի չափաւոր պահպանողական ներկայացուցիչների հետ: Իր կենսագրական գծերից եւս տեսանք այդ:

Յովհաննիսեան միանգամայն հեռու է եղել հայկական ազատամտութեան օրգաններից, «Մշակ»ի գլխաւորութեամբ: Որեւէ կապ չէ ունեցել նաեւ յեղափոխական–արմատական ուղղութիւնների հետ: Որպէս մարդ եւ քաղաքացի՝ նա եղել է պահպանողական եւ եկեղեցասէր: Նրա այդ տրամադրութիւնները մի որոշ չափով արտայայտուած ենք գտնում նաեւ իր ստեղծագործութեանց մէջ, թէեւ այդ կարգի ոտանաւորները չեն երբեք, որոնցով Յովհաննիսեան իր տեղն է գրաւել հայ գրականութեան պատմութեան մէջ:

Յովհաննիսեան իր գրական կեանքի մի զգալի մասը անց է կացրել Վաղարշապատում,